ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«26» սեպտեմբերի 2017 թ. թիվ 4187-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՌՈՅԱԼ ԻՆՏԵՐԹԵՅՆՄԵՆՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2017թ. օգոստոսի 29-ի թիվ 03/24-2/15648-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017թ. օգոստոսի 03-ի թիվ 402-Ա հրամանի հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից իրականացված «Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 2014թ. հունվարի 01-ին տրված թիվ ԽՏ-003 խաղատան կազմակերպման լիցենզիայի պայմանների և պահանջների կատարման ստուգման արդյունքում 2017թ. օգոստոսի 24-ին կազմված թիվ ԽՏ-02 ակտի՝ «Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը թվով երկու դեպքով խախտել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը:

«Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախկինում այդպիսի խախտում թույլ տրված լինելու հիմքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1667-Ա

հրամանով «Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվել է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ղեկավարվելով «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով և 3-րդ մասով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Ռոյալ Ինտերթեյնմենտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք երկու միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի չափով, որից հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամը՝ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով սահմանված պահանջը խախտելու մեկ դեպքի համար, իսկ մեկ միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամը՝ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետով սահմանված պահանջի մյուս խախտման համար՝ պայմանավորված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշերի առկայությամբ:
2. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024154 հաշվեհամարին:
3. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրագեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ